2057

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«21» 02 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0023-23

Ձեռնարկողը՝ ***«Արմստրոյ» ՍՊԸ***
Ք Երևան, Նոր Արեշ, 8-րդ փողոց, 56

Գործունեությունը՝ ***Սյունիքի մարզի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրման, հենապատերի վերականգնման, նոր ճաղավանդակների տեղադրման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Ք. Կապան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ №0025-23

«21» 02 2023թ.

Սյունիքի մարզի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրման, հենապատերի վերականգնման, նոր ճաղավանդակների տեղադրման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արմստրոյ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Ք. Երևան, Նոր Արեշ, 8-րդ փողոց, 56

Ներածական մաս. Նախատեսվող գործունեությունն է՝ իրականացնել Վաչագան գետի հունի մաքրման, հենապատերի հիմքերի ուժեղացման, հենապատի վերականգնման և վերանորոգման (ձախակողմյան), հենապատերի ամրացման (աջակողմյան), մայթի բազրիքի վերականգնման, վերանորոգման (աջակողմյան), բետոնե բազրիքների քանդման, նոր ճաղավանդակների տեղադրման (աջակողմյան), մայթի նորոգման, ծառերի և արմատների հանման, կամուրջների ձևափոխման, հունի մեջ գտնվող խողովակաշարերի ապամոնտաժման, ստորգետնյա եղանակով գազատար խողովակի մոնտաժման, լուսավորության համակարգի անցկացման, բնահողի տեղափոխման աշխատանքներ: Գետի հունի հիմնական տեսանելի աղտոտումը դրա ֆիզիկական աղտոտումն է մարդկային ակտիվ գործունեության և առատ տեղումների արդյունքում՝ վարարումների ժամանակ ջրաբերուկներով, կենցաղային աղբով (ապակյա և պլաստիկ շշեր ու այլ տարատեսակ պլաստիկ նյութեր, մետաղի ջարդոն) և այլն: Գետի հունի ֆիզիկական աղտոտվածությունը գետի էկոհամակարգի վրա կարող է ունենալ քայքայիչ ազդեցություն: Գետի հունի աղտոտվածությունը հանգեցնում է ջրի որակի վատացման և ջրի բնական հոսքի խաթարմանը, ինչը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն գետի ջրի որակի, այլև գետի հունով՝ դեպի ներքև գտնվող ջրօգտագործողների կարիքների վրա: Այն դեպքերում, երբ գետը հոսում է բնակավայրով, հատկապես՝ քաղաքով, աղտոտված գետի հունն ունենում է նաև էսթետիկ և ակնադիտական (վիզուալ, տեսողական) բացասական ազդեցություն: Ֆիզիկական աղտոտվածության պատճառով հոսքի արագության նվազման արդյունքում բազմապատկվում է ջրի որակի վատթարացման արագությունը:

Գործունեությունն իրականացվելու է Կապան քաղաքի «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիմացի կամրջից մինչև Մ. Ստեփանյան փողոցի թիվ 43 բ/բ շենքի հարևանությամբ գտնվող ջրավազանը: Նախատեսվում է ֆիզիկական աղտոտվածությունից ամբողջությամբ մաքրել Վաչագան գետի 955 մ հատվածը:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գետի հունի ֆիզիկական մաքրումը հանդիսանում է ջրավազանների մաքրման անհրաժեշտ միջոցառում: ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Վաչագան գետն ունի տեսանելի ֆիզիկական աղտոտում՝ պինդ ջրաբերուկներով և կենցաղային աղբով, ինչն էլ իր հերթին հանգեցրել է գետի հունի մեջ ծառերի և թփերի աճման: Ինչպես արդեն նշվել է դա ունի էական բացասական ազդեցություն գետի էկոհամակարգի վրա,նաև առաջացնում է տեսողական տհաճ ազդեցություն: Սույն նախագծով նախատեսվում է ֆիզիկական աղտոտվածությունից ամբողջությամբ մաքրել Վաչագան գետի 955 մ հատվածը: Մաքրման աշխատանքները նախատեսվում է սկսել մաքրման ենթակա հատվածի վերին մասից՝ մաքրման աշխատանքների ժամանակ նոր աղտոտվածությունից խուսափելու նպատակով: Մաքրման աշխատանքները կատարվելու են էքսկավատորով և բուլդոզերով: Քանի որ գետի հունի մեջ տեխնիկա իջեցնելու համար նախատեսված մուտքային ճանապարհներ չկան, ապա մաքրող տեխնիկան հունի մեջ է իջեցվելու վերամբարձ կռունկի օգնությամբ: Կռունկի օգնությամբ գետի մեջ է իջեցվելու նաև համապատասխան արկղ: Էքսկավատորը գետից հանված աղբը լցնելու է արկղի մեջ: Արկղը վերամբարձ կռունկով բարձրացվելու է և դատարկվելու ինքնաթափի մեջ: Հավաքված աղբը ինքնաթափերով տեղափոխվելու և տեղադրվելու է Կապանի համայնքապետարանի կողմից նախատեսված լցակույտային տարածքում, որը գտնվում է գետի մաքրվող հատվածից մոտ 11 կմ հեռավորության վրա: Շինարարական թափոնների և աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի անմիջապես Կապանի քաղաքապետարանի կողմից ընտրված կազմակերպության հետ:

Վաչագան գետի հունի մաքրման ենթակա հատվածում առկա են հետևյալ ենթակառուցվածքները՝

- գազատար խողովակաշար՝ գրեթե ամբողջ երկայնքով,
- խմելու ջրի խողովակաշար՝ գետի լայնական հատույթով տեղամասերում:

Գետի հունի մաքրումից հետո նախատեսվում է հատակը բետոնապատել՝ մեջտեղում իրականացնելով գլաքարային շարվածք: Գլաքարային շարվածքի կառուցվածքը և թեքությունը նախատեսված է այնպես, որ հնարավորություն կտա այդ հատվածում ձկների ազատ տեղաշարժի: Աշխատանքների ավարտին իրականացվելու է նաև այդ հատվածում գետի հունի փլուզված (վնասված) հենապատերի վերականգնում, իսկ բացակայող մասերում՝ նոր հենապատերի կառուցում: Բետոնապատվող մակերեսները՝ հատակի և հենապատերի հատակգծային մակերեսը կազմում է 7500 մ^2: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 24 ամսում՝ հաշվի առնելով եղանակային պայմանները և գետի վարարման ժամանահատվածը: Մաքրման աշխատանքների ընթացքում հունի մեջ գտնվող խողովակաշարերը պետք է հանվեն՝ ապամոնտաժվեն և տեղափոխվեն գետի հունից դուրս: Սեփական տների հատվածում անհրաժեշտ է կառուցել նոր կենտրոնական (մագիստրալային) կոյուղատար և այն միացնել քաղաքային հիմնական կոյուղատարին: Նախատեսվում է կառուցել

նոր կոյուղատար գետի հունի ձախակողմյան հատվածում: Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիվինիլքլորիդե 50-100մմ խողովակներով: Կոյուղու ելքագծերի հորիզոնական հատվածների համապատասխան հեռավորությունների վրա նախատեսվում են մաքրիչներ: Նախատեսվում է կառուցել 40 հատ նոր դիտահոր: Կոյուղատարի երկարությունը կազմում է 780 մ: Տրամագիծը 300 մմ: Գործող գազատարի և ջրատարի երկարությունը կազմում է մոտ 720 մ, գործող կոյուղատար առկա չէ:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

1. մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանք կատարելը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված /ենթակառուցվածքի սեփականատեր/ ստանալ թույլտվություններ:
2. Կազմակերպել շինհրապարակ:
3. Կազմել առանձին աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները՝ շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, շինհրապարակի գիշերային լուսավորվածություն, աշխատանքների արդյունքում առաջացած թափոնների տեղափոխում Կապանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հիմնական փուլում կատարվում է գետի հունի մաքրում, իսկ աշխատանքների ավարտին իրականացվելու է նաև այդ հատվածում գետի հունի փլուզված (վնասված) հենապատերի վերականգնում, իսկ բացակայող մասերում՝ նոր հենապատերի կառուցում:

Նախատեսվող շինարարական աշխատանքները ներառում են.

- գետի հունի մաքրում,
- հենապատերի հիմքերի ուժեղացում, հենապատի վերականգնում և վերանորոգում (ձախակողմյան), հենապատերի ամրացում (աջակողմյան),
- մայթի բազրիքի վերկանգնում, վերանորոգում (աջակողմյան),
- բետոնի բազրիքների քանդում,
- նոր ճաղավանդակների տեղադրում (աջակողմյան),
- հունի մեջ գտնվող խողովակաշարերի ապամոնտաժում,
- նոր կոյուղատարի կառուցում:
- Շինարարության ընթացքում մշակման ենթակա հողերը պատկանում են III, VI կարգի: Հողերի մշակումը, խրամուղու և փոսորակների հատակի մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Հանված հողերը պահեստավորվելու են տարածքի եզրային մասում՝ ծածկի տակ և օգտագործվելու են տարածքի բարեկարգման և կանաչապատման համար:
- Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են օգտակար հանույթի փափուկ հողերը:
- Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվոր ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ: Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

- Նախագծում նախատեսված է հիմնականում միաձույլ երկաթբետոն B25 դասի բետոն:
- Առաջարկվում է BCC պլաստիֆիկատորի օգտագործում բետոնի մեջ:

Պլաստիֆիկատորի օգտագործումը բերում է՝

- 1. ջրի պարունակության նվազեցման՝ առանց խառնուրդի պիտանելիության վնասման
- 2. ցեմենտի խնայողության, մոտավորապես՝ 10%
- 3. ավելի ամուր, խիտ բետոնի ստացման
- 4. ավելի ամուր, մաշակայուն և ցրտադիմացկուն մակերևույթի առաջացման
- 5. բետոնը առավել քիչ է թափանցելի օդի, ագրեսիվ գազերի ու հեղուկների նկատմամբ
- 6. սեղմման նվազեցում և ֆազաբաժանման ու հոսունության բացառման:

Բետոնի տեղադրումը առաջարկվում է իրականցնել հիմնականում բետոնապոմպերի օգնությամբ, որոշ հատվածներում շինկոնքի օգնությամբ:

Բետոնի, քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս (առավելագույն 3տ բեռնունակությամբ սլաքի շառավիղը 15մ մասնաշենքի) նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Նախատեսվող գործունեության իրականացման համար շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում բազալտե եզրաքար, ցեմենտ, ավազ, խիճ, ամրան, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար:

Կապանի քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղեր: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ /մնացորդային հողային զանգվածներ, բետոնյա ծածկույթ և այլն/, որոնք սահմանված կարգով նախատեսված են տեղափոխել Կապանի քաղաքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր: Աշխատանքների ընթացքում գետի հունը պետք է մաքրվի 5760 մ^2 թփուտներից և 2715 մ^3 ծավալով կենցաղային և շինարարական թափոններից: Քանդման և մաքրման աշխատանքների արդյունքում առաջացող շինարարական աղբը տեղափոխվելու է Կապանի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված՝ համապատասխան քաղաքային աղբավայրեր: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շենքերի քանդումից առաջացող թափոնները ներկայացված են՝ շինարարական աղբով, ծածկագիր՝ 9120060001004 /վտանգավորության 4-րդ դաս/: Իսկ շինարարության ընթացքում աշխատողների կենցաղային թափոնները կհեռացվեն մոտակա աղբահավաք տարողություններ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ գործունեության իրականացման շինհրապարակը ցանկապատել, աշխատանքների անցկացման վայրերը ծածկել համապատասխան ցանցերով, սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը, պարբերաբար ստուգել տեխնիկայի և փոխադրամիջոցների

տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում, գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով, խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝ բետոնի խառնուրդը գնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից, ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար, բացառել շինանյութերի և աղբի տարածումը տեղամասում և համապատասխանաբար՝ գետում:

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը բերրի հողի պահպանությունն է: Բերրի հողը կհանվի, կպահեստավորվի և կտնօրինվի ՀՀ կառավարության 02 10 2017 թ N 1404-Ն պահանջներին համապատասխան: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝ շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որը ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով, աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Կապանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. Ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝ շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները, թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ Կապանի համայնքապետարանի կողմից ընտրված կազմակերպության հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն՝ 11 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր, շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից, գետի հունի մաքրման աշխատանքների ժամանակ գետի ջրերը նավթամթերքով լրացուցիչ աղտոտումից զերծ պահելու նպատակով, մինչև գետի մեջ մտցնելը, մաքրող տեխնիկան պետք է ամբողջությամբ լվացվի և վերանորոգվի այնպես, որպեսզի բացառվի վառելիքի և քսուքային նյութերի որևէ արտահոսք: Շինարարությունից ազատ մնացած տարածքների բարեկարգման նպատակով նախատեսվում է օգտագործել աշխատանքների ընթացքում հանված բնահողերը:

Շինարարության ընթացքում աղմուկի մակարդակը նվազեցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները և բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում: Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական

աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Գետի հունի մաքրման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Գետի հունի մաքրման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել

աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Վաչագան գետի հունի մաքրման և գետի ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել և պահպանել «Ջրային օրենսգրքի» պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրման, հենապատերի վերականգնման, նոր ճաղավանդակների տեղադրման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան